Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի Ա. Իսահակյանի անվան N 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնորինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին ՝ժամը 14:00-ին, ՀՀ կոտայքի մարզի Հրազդանի Ա. Իսահակյանի անվան N. 9 հիմնական դպրոցում,հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)24-70-04 հեռախոսահամարով: